ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 21

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու հերթական նիստին ներկա էին 12 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը, Վրույր Այվազյանը, Արտյոմ Տոնոյանը, Վարսենիկ Քալաշյանը,Թամարա Գրիգորյանը:

Բացակա էին Հրայր Թորոսյանը, Համլետ Գևորգյանը,Ալիկ Սարգսյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Կ. Լալազարյանը, Գոռ Աղաջանյանը ,համայնքապետարանի աշխատակիցներ ՝ Մ. Մեսրոպյանը,, Ս.Ղուկասյանը, Ս.Սուքիասյանը, Ա.Դավոյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյանը</u>:

Համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը ներկայացրեց օրակարգը, ավագանին քննարկեց և դեմ քվեարկեց օրակարգին՝ առաջարկելով օրակարգ ընդգրկել Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

Քննարկումից հետո հարցը ընդգրկվեցին օրակարգ՝ 11-կողմ, 1-դեմ ձայներով:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ.Խ.Վարդանյան/
2.ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին:
/Զեկ. Ս.Սուքիասյան/
3.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 25 օրյա վարժական հավաքներին մեկնող զինապարտների ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/Զեկ. Ա. Դավոյան/

4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի նորածիններ ունեցող և հարազատին կորցրած ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/Զեկ. Ա. Դավոյան/
5.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության տալու մասին:
/Զեկ.Ս. Ղուկասյան/

6.ՀՀ Լոռու մարզի մարզի Գյուլագարակ համայնքի հողի հարկի տույժերը զիջելու մասին:
/Զեկ. Ռ.Օհանյան/
7. Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
/Զեկ.Մ. Մեսրոպյան/
8.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու հաջորդ նիստի օր նշանակելու մասին:
/Զեկ. Ս. Նալբանդյան/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Խ.ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թ. սեպտեմբերի 12-ի հերթական նիստիօրակարգը՝համաձայն հավելվածի:
ԿՈՂՄ-12, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 99-Ա/

Լսեցին՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. Ս.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 42-րդ կետով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2024թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային «Գյուլագարակ բնակավայրում սպորտ դպրոցի համայնքային շենքի կառուցում », « Պուշկինո բնակավայրում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում», «Գյուլագարակ , Կուրթան, Պուշկինո, Վարդաբլուր և Ամրակից բնակավայրերի տուֆ քարով սալարկում» աշխատանքներին :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-1, ՁԵՌՆՊԱՀ-3

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 100-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 25 -ՕՐՅԱ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՄԵԿՆԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Դավոյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշումը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի բյուջեից 25-օրյա վարժական հավաքներին մեկնած զինապարտների ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-12, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 101-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ա.Դավոյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձանժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից

ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն/ համաձայն թիվ 01 հավելվածի

բ/ հարազատին կորցրած ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 02 հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-12, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 102-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ.Ս.ՂՈՒԿԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,«Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով,հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը,Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության տալուն

1) 1.28236 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ հնդավոր, 1 /մեկ/ լոտով ծածկագիր 06-093-0143-0003 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 20000/ քսան հազար / ՀՀ դրամ:

2) 1.2802 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 2 /երկու/ լոտով ծածկագիր 06-093-0143-0015 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 6000/ վեց հազար / ՀՀ դրամ:

3) 1.75068 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 3 /երեք/ լոտով ծածկագիր 06-093-0151-0008 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 22000/քսաներկու հազար / ՀՀ դրամ:

4) 5.07079 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 4 /չորս/ լոտով ծածկագիր 06-093-0152-0009 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 19000/տասնինը հազար / ՀՀ դրամ:

5) 2.81821 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 5 /հինգ/ լոտով ծածկագիր 06-093-0152-0008 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 11000/տասնմեկ հազար / ՀՀ դրամ:

6) 1.35374 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 6 /վեց/ լոտով ծածկագիր 06-093-0116-0028 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/տասնհինգ հազար / ՀՀ դրամ:

7) 1.25356 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 7 /յոթ/ լոտով ծածկագիր 06-093-0129-0009 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/տասնհինգ հազար / ՀՀ դրամ:

8) 1.71331 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ va8elahwx, 8 /ութ/ լոտով ծածկագիր 06-093-0130-0001 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/տասնհինգ հազար / ՀՀ դրամ:

9) 1.30206 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 9 /ինը/ լոտով ծածկագիր 06-093-0150-0015 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 18000/տասնութ հազար / ՀՀ դրամ:

2.Աճուրդ վաճառքով օտարելուն

1) 1/մեկ/ լոտով 0,19783 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝վարելսհող, ծածկագիր 06-027-0145-0019, մեկնարկային գինը 185000 / մեկ հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

2) 2/երկու/ լոտով 0,28869 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝վարելահող, ծածկագիր 06-027-0145-0017, մեկնարկային գինը 246000 / երկու հարյուր քառասունվեց հազար / ՀՀ դրամ:

3) 3/երեք/ լոտով 2.04812 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝վարելահող,

4) 4/չորս/ լոտով 0,22094 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝հասարակական կառուցապատման, ծածկագիր 06-013-0119-0005, մեկնարկային գինը 550000/ հինգ հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ:
5) 5/հինգ/ լոտով 1.56092 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝հասարակական կառուցապատման, ծածկագիր 06-013-0119-0006, մեկնարկային գինը 3552000 / երեք միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար / ՀՀ դրամ:
6) 6/վեց/ լոտով 0,17691 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-057-0144-0018, մեկնարկային գինը 142000/ մեկ հարյուր քառասուներկու հազար / ՀՀ դրամ:
7)7/յոթ/ լոտով 0,03406 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝խոտհարք, ծածկագիր 06-057-0120-0008, մեկնարկային գինը 90000 / իննսուն հազար/ ՀՀ դրամ:
8) 8/ութ/ լոտով 0.70227 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝խոտհարք, ծածկագիր 06-057-0100-0025, մեկնարկային գինը 415000 / չորս հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-4
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 103-Ա/

Լսեցին՝
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ.հունիսի 22 -ի թիվ 822 որոշումը, համայնքի բնակիչների դիմումները՝ հողի հարկերի տույժերը զիջելու մասին , Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
Կիրառել՝

1.Հողի հարկի գոյացած տույժի արտոնություններ կուտակված ապառքը ամբողջությամբ և միանգամից մարած բնակիչների՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԿՈՂՄ-12, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 104-Ա/

Լսեցին՝
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝
համայնքի ավագանին որոշում է.
1.Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-4
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 105-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի ավագանու հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի նոյեմբերի 10-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-12, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 106-Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ